# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՀԱՐՑԸ

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Պատմական արձակի ժանրակազմ առանձնահատկություններից չափազանց կարևոր է պատմության՝ պատվիրատու ունենալու հանգամանքը, որով էլ պայմանավորված են տվյալ պատմության բովանդակային ընդգրկումները, կառուցվածքը, կերպարների նկատմամբ հեղինակի վերաբերմունքը:*

*Հայագիտության մեջ Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության պատվիրատուի խնդրին անդրադարձել են Գ. Զարբհանալյանը[1], Ն. Պողարյանը[2], Փ. Անթաբյանը[3], Վ. Վարդանյանը[4], Գ. Տեր-Վարդանյանը[5]: Զարմանալին այն է, որ նրանք իրարից անտեղյակ շրջանառել են տարբեր վարկածներ՝ Պատմության պատվիրատու համարելով երկու թագավորների՝ Գագիկ Արծրունուն և Աշոտ Երկաթին կամ Աշոտ Շապուհյանին, կամ Գուրգեն Արծրունուն, կամ Աշոտ Ա Բագրատունուն:*

*Հոդվածի գիտական նորույթը Հովհ. Դրասխանակերտցու Պատմության՝ մեկ թագավորի կողմից պատվիրված լինելու վարկածն է: Նպատակն է պարզել, թե Պատմության պատվիրատուն մե՞կ, թե՞ երկու թագավոր է, խնդիրը՝ պարզել իրական պատվիրատուի ինքնությունը: Ըստ այդմ՝ կիրառվել են փաստերի համադրման և վերլուծման, ինչպես նաև՝ պատմական ու պատմահամեմատական մեթոդները:*

*Ակնհայտ է, որ պատվիրատու ունենալու հարցում Հովհաննես կաթողիկոսի Պատմությունը ևս բացառություն չէ: Դա նկատել է դեռևս Գ. Զարբհանալյանը. «Չգիտցուիր թէ երբ կամ որ իշխանին խնդրովը և առաջարկութեամբ ձեռք զարկաւ իր Պատմագրութիւնը շարադրելու»[6]: Նրա թեական անդրադարձը որոշա-*

---

[1] *Տե՛ս Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն. Պատմութիւն հայերէն դպրութեանց, հ. Ա, Վենետիկ, 1865, էջ 403:*

[2] *Տե՛ս Ն. Պ ո ղ ա ր ե ա ն. Հայ գրողներ, Ե–ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 138:*

[3] *Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչներ, V–XVIII դարեր, Երևան, 1976, էջ 143:*

[4] *Տե՛ս Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հովհաննես Դրասխանակերցու կյանքի վերջին շրջանի մասին.– ՊԲՀ, 1988, - 3, էջ 114–125:*

[5] *Տե՛ս Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Անթիլիաս–Լիբանան, 2010, էջ 317:*

[6] *Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 403:*

*կիացնում է Ն. Պողարյանը. «Իր գործին ձեռնարկած է «թագավորաց» հրամանով»[7]: Իսկ Փ. Անթաբյանն ավելի կոնկրետ գրում է. «Ենթադրվում է, որ այն գրված է Աշոտ Երկաթի և Գագիկ Արծրունու խնդրանքով»[8]:*

*Խնդրին անդրադարձել է նաև Վ. Վարդանյանը. «Հովհաննես Դրասխանակերտցին որոշակի չի նշում, թե ում պատվերով է գրել իր Պատմությունը: Սակայն նրա երկի վերլուծությունը թույլ է տալիս կարծելու, որ պատմիչն իր երկը պետք է շարադրած լիներ նաև Արծրունյաց թագավորի խրախուսմամբ»[9]: Ապա կենտրոնանալով «թագավորներ» բառի վրա՝ նա Արծրունյաց թագավորներին է համարում պատվիրատու. «Ովքե՞ր էին այդ թագավորները: Այս հարցին պատասխանելիս պետք է առաջին հերթին նկատի առնել այն պարագան, որ Հովհաննես Դրասխանակերտցին այդ պահին գտնվում էր Վասպուրականում: Այն հանգամանքը, որ նա հյուր էր Արծրունյաց արքունիքում, պետք է որոշակիորեն իր կնիքը թողներ պատմագրի և Արծրունի տիրակալների հարաբերությունների վրա: Այստեղ նա, բնականաբար, պետք է անսար վերջիններիս հորդորներին՝ որքան հնարավոր է արագ իր լրումին հասցնել ձեռնարկած երկասիրությունը: «Թագավորների» տակ ըստ երևույթին նկատի է ունեցել Գագիկ Արծրունուն և նրա եղբորը՝ Գուրգենին»[10]:*

*Իրավացի է Վ. Վարդանյանը, երբ պնդում է, թե այդ միջոցին պատմիչը գտնվում էր Վասպուրականում: Ապա, տեսնելով, որ այդ դեպքում պատվիրատու երկու թագավորների Արծրունի լինելը քիչ հավանական է, ենթադրաբար առաջ է քաշում Աշոտ Շապուհյանի վարկածը. «Երկի պատվիրատուն սկզբնապես եղել է ոչ թե Գագիկ Արծրունին, այլ մեկ ուրիշ անձնավորություն: Պատմագրի երկում եղած տվյալները, նրա դրական վերաբերմունքը Աշոտ Շապուհյանի հանդեպ թույլ են տալիս ենթադրելու, որ վերջինս է սկզբնապես ներշնչել հայոց կաթողիկոսին գրելու Հայոց պատմությունը: Վասպուրական մեկնելուց հետո պատմիչը շարունակել է աշխատել իր երկասիրության վրա: Այնտեղ նրան սատարել, շտապեցրել են Գագիկ և Գուրգեն Արծրունիները»[11]:*

*Ինչ վերաբերում է Վ. Վարդանյանի կողմից պատվիրատու առաջարկված Գագիկի եղբայր Գուրգեն Արծրունուն, ապա հարկ է նշել, որ պատմիչը որքան էլ հիացմունքով նրան անվանում է «վայելչատես ու բարեպաշտ»[12], գրում է, թե Գագիկ թագավորն «իր եղբայր Գուրգենի հետ միասին անկեղծ սիրով պաշտպանե-*

---

*[7] Ն. Պ ո ղ ա ր ե ա ն. նշվ. աշխ., էջ 138:*

*[8] Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V–XVIII դարեր, էջ 143:*

*[9] Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 122:*

*[10] Նույն տեղում, էջ 124:*

*[11] Նույն տեղում, էջ 125:*

*[12] Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 247:*

*լով մեզ, առատորեն կատարելով մարմնի անհրաժեշտ պետքերը»[13], այնուամենայնիվ, Գուրգեն Արծրունու մասին թողել է աննպաստ մի վկայություն. Գուրգեն մարզպանը գնում է «անվարժ ու անփորձ մտքով համոզելու ոստիկանին»[14]:*

*Նկատենք, որ այս Գուրգեն Արծրունին՝ իր «անվարժ ու անփորձ մտքով», քիչ հավանական է, որ լիներ կաթողիկոս պատմիչի Պատմության պատվիրատուն:*

*Աշոտ Շապուհյանի անունն էլ Դրասխանակերտցին հիշատակում է նախ առաջաբանում, ապա նրան նկարագրում է իբրև «…գեղեցկատես, բարեվայելուչ երիտասարդ»[15], «…չքնաղագեղ, խելացի, առատաձեռն»[16]: Ակնհայտ է նաև, որ երբ Աշոտը հնազանդվում է Յուսուֆին, պատմիչն արդարացնում է նրա այդ քայլը. «Բայց Հայոց սպարապետ Աշոտը դեռևս մնում էր չար հորձանքի մեջ և չէր կարողանում հնար գտնել զատվելու Յուսուֆից, որովհետև նրանք միշտ թաքուն ու ուշադիր հետևում էին նրան: Սակայն սպարապետը խելացի վարդապետությամբ ամեն ինչով ենթարկվում էր ոստիկանի կամքին, միայն թե նա ապահովեր իր կյանքի փրկությունը»[17]: Այլ տեղ գրում է. «Չար բռնակալ Յուսուֆը չհիշեց Աշոտ սպարապետի անդուլ, անդադար, մշտնջենական հավատարմությունն ու ծառայությունը»[18] և բանտարկեց նրա մորն ու քրոջը: Հովհ. Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտ Շապուհյանը «…հավատարիմ չի մնացել իրենց միջև հաստատված դաշինքին»[19], ուստի Աշոտ Երկաթն իր զորքով հարձակվում է և նրան փախուստի մատնում. նա ապաստանում է Դվինում: Պատմիչը գրում է, որ երբ Աշոտ Շապուհյանը խախտել էր Աշոտ Երկաթի հետ կնքած դաշինքը, վերջինս չի լսում կաթողիկոսի հորդորը՝ հաշտվել հորեղբորորդու հետ, ինչի համար էլ նա Աշոտ Երկաթին ամբարտավան է անվանում: Այլուր «մյուս թագավոր»[20] Աշոտ Շապուհյանը լսում է կաթողիկոսին և գնում Աշոտ Երկաթ Շահնշահին հանդիպելու և հաշտություն կնքելու:*

*Կարևոր է նաև այն փաստը, որ Նսրրի հարձակումներից պաշտպանվելու համար կաթողիկոսը գնում է «Բագարանի արքունական ապարանքը, թագավորող Աշոտի մոտ»[21], այնտեղ մնում մինչև աշուն. «Իսկ ես, որ նախ գնացի Աշոտ թագավորազուն ժառանգի մոտ, այստեղ մնացի մինչև ամռան եղանակի աշնան*

---

[13] *Նույն տեղում, էջ 359:*
[14] *Նույն տեղում, էջ 215:*
[15] *Նույն տեղում, էջ 197:*
[16] *Նույն տեղում, էջ 219:*
[17] *Նույն տեղում, էջ 273:*
[18] *Նույն տեղում, էջ 293:*
[19] *Նույն տեղում, էջ 299–301:*
[20] *Նույն տեղում, էջ 311:*
[21] *Նույն տեղում, էջ 341:*

*փոխվելը՝ բոլոր կարիքների համար առատաձեռնությամբ նրանից ստանալով բազմաթիվ բարիքներ ու լիակատար սեր»[22], որտեղից էլ Գագիկ թագավորի «մշտական հրավերով» մեկնում է Աղթամար:*

*Հարկ է նշել, որ Աշոտ Շապուհյանի մասին պատմիչն որևէ աննպաստ բան չի գրում, սակայն որևէ փաստ էլ չկա, որ ապացուցի, թե նա է եղել Պատմության պատվիրատուն:*

*Պատմության մի նոր պատվիրատու է առաջարկում Գ. Տեր-Վարդանյանը: Հղում անելով պատմության վերջաբանի հետևյալ տողերին՝ «Նախ ինձ շտապեցնող նեղությունից, որ պաշարեց մեզ, և ապա թագավորների վերահասու հրամանից, որ ճնշեց իմ գիտակցությունը և համաձայնեցրեց, որ ես չհապաղեմ այս գործի մեջ»[23], նա գրում է. «Նրա գլխաւոր՝ «Պատմութիւն հայոց» երկը գրուել է Աշոտ Ա Բագրատունի եւ Գագիկ Արծրունի «թագավորաց» հրամանով» (ԿԷ[Ա]. 4)»[24], թերևս, ապավինելով «թագավորների» բառին, սակայն առանց հիմնավորելու Աշոտ Ա Բագրատունու մասին իր այդ տեսակետը: Գ. Տեր-Վարդանյանի կարծիքը, միգուցե, կարող էր համոզիչ լինել, մանավանդ եթե նկատի ենք ունենում, թե ինչ հիացմունքով է խոսում Դրասխանակերտցին Աշոտ Ա Բագրատունու մասին. «Բայց ինձ համար այստեղ մեկ այլ բան ավելի սիրելի չէ. քան զբաղվել այն գովեստով, որ վերաբերում է իշխանաց իշխան Աշոտին: Քանի որ նա միջին տարիքի հասնելով՝ բարձրահասակ էր, մարմնեղ, թիկնավետ, զվարթադեմ, մրահոն: Նա աչքերի մեջ արյան կետեր ուներ, որպես մարգարտի մեջ երևացող կարմիր հակինթ, զարդարված էր գեղեցիկ մորուքով, խելացի ու քաղցրախոս էր, խրախճանքի, կերակուրների նկատմամբ պարկեշտ. նա չէր նախանձում լավագույններին և չէր արհամարհում ավելի նվաստներին, այլ իր խնամքի զգեստը հավասարապես էր տարածում բոլորի վրա»[25]:*

*Սակայն հարկ է փաստել, որ Աշոտ Ա Բագրատունին հայոց թագավոր է հռչակվել 885 թ. և մահացել է 890 թ., երբ Հովհ. Դրասխանակերտցին եղել է մոտ 40–45 տարեկան, այսինքն՝ այդ ժամանակ նա կաթողիկոս չէր և դեռևս ծեր չէր, մինչդեռ Պատմության առաջաբանում հեղինակը հիշատակում է, որ ինքը ծեր մարդ է ու շտապում է ավարտին հասցնել իրեն տրված պատվերը. «Ես չեմ ուզում առաջաբանի վրա երկար ժամանակ վատնել, որովհետև ցավագին ծերությունը մահը պատրաստ է պահում դռան հետևում, և տագնապն ու տարակու-*

---

[22] *Նույն տեղում, էջ 359:*

[23] *Նույն տեղում, էջ 363:*

[24] *Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, էջ 317:*

[25] *Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. նշվ. աշխ., էջ 141:*

*սանքն ստիպում են հապճեպորեն պատմել մեզ հասած անցքերի, աղետների, անհամար խռովությունների ու դեպքերի մասին»[26]:*

*Ուրեմն՝ Պատմությունը գրել ստացած և հենց առաջաբանում իրեն ծեր համարող հեղինակը չէր կարող պատվեր ստանալ Աշոտ Ա Բագրատունուց, քանի որ նա Հովհաննես կաթողիկոսի ծերության տարիներին այլևս կենդանի չէր:*

*Այդ առումով ծեր պատմիչին ժամանակակից Աշոտ թագավորը Փ. Անթաբյանի կողմից պատվիրատու համարված Աշոտ Բ Երկաթն է, որ թագավորել է 914–928 թթ., երբ Դրասխանակերտցին 898 թ. արդեն կաթողիկոս էր և Աշոտ Երկաթի թագավորության տարիներին էլ եղել է ծերության տարիքում:*

*Հետևելով պատմիչի՝ Աշոտ Երկաթի մասին վկայություններին՝ նկատում ենք, որ նա երիտասարդ Աշոտ արքայորդուն բնութագրում է որպես քաջագործություն կատարող[27], սակայն այլ տեղ նրան անվանում է «ամբարտավան ու գոռոզ». «Բայց Աշոտ արքայորդին, ապավինելով իր զորքերի բազմությանը և հույսը դնելով իր քաջության վրա, հոխորտում էր ամբարտավան ու գոռոզ կերպով»[28]: Այնուհետև պատմիչն Աշոտ Երկաթի նկատմամբ իր հակակրանքն արտահայտել է առավել հստակ. «Ինձ թվում է, որ այն ողջախոհությունը, որ նա սկզբից էր ստացել, փոխարկելով անմաքուր ողջախոհությամբ, իրենից հեռացնելով Աստծու քաղցր պաշտամունքը և փարիսեցիների նման դրսևորելով իր ամբարտավան կամքը՝ թերևս այդ պատճառով էլ դատապարտվեց՝ չհասնելով իր փրկության վերջին»[29]:*

*Այս պարագայում պարզապես բացառվում է, որ Պատմության պատվիրատուն լիներ հեղինակի կողմից հանդիմանվող ու այպանվող Աշոտ Երկաթը:*

*Ամփոփելով՝ փաստենք, որ բոլոր հայագետները պատվիրատուներից մեկին հաստատապես համարել են Գագիկ Արծրունի թագավորին:*

*Արդ, մի հայացք գցենք Դրասխանակերտցու ապրած ժամանակին, որը ևս օգնում է հարցի պարզաբանմանը:*

*Հովհ. Դրասխանակերտցին 898 թ. սկզբներին դարձել է հայոց կաթողիկոս: Նրա կաթողիկոսության առաջին տասնամյակը, երբ դեռ նա ծեր չէր, համեմատաբար խաղաղ է անցել:*

*Սմբատ Ա Բագրատունու (890–914) թագավորության տարիներին՝ 908 թ., արաբների աջակցությամբ Գագիկ Արծրունին Վասպուրականում հիմնեց առանձին թագավորություն՝ խախտելով Բագրատունյաց թագավորության միասնությունը:*

---

[26] *Նույն տեղում, էջ 9:*

[27] *Տե՛ս նույն տեղում, էջ 273:*

[28] *Նույն տեղում, էջ 303:*

[29] *Նույն տեղում, էջ 325:*

*909 թ. Ատրպատականի արաբ ոստիկան Յուսուֆը Գագիկ և Գուրգեն Արծրունիների աջակցությամբ գրավեց Դվինը:*

*Սմբատ Ա թագավորի և Յուսուֆի միջև խաղաղություն հաստատելու նպատակով Հովհաննես կաթողիկոսը մեկնել է Յուսուֆի մոտ՝ քաջ գիտակցելով իր անձին սպառնացող վտանգը: Նենգ ոստիկանը թանկարժեք ընծաներն ընդունել է սիրով, սակայն որոշ ժամանակ անց բանտարկել է նրան. «Իսկ ինձ նա բանտարկեց Դվին քաղաքում, մետաղյա բանտում, երկաթյա կապանքներով»[30]:*

*Երկար պայքարից հետո՝ 914 թ., Սմբատ Ա-ն հարկադրված հանձնվել է Յուսուֆին, ով Դվինում նենգաբար գլխատել է Սմբատ Ա-ին, և վերջինիս հաջորդել է որդին՝ Աշոտ Բ Երկաթը (914–928):*

*Անիրավ Յուսուֆը մերժել է կաթողիկոսի թողության հրամանը, սակայն, ի վերջո, 910 թ. Հովհաննես կաթողիկոսին հաջողվել է ազատվել բանտարկությունից: Նա սկզբում փախել է Աղվանք՝ Սահակ իշխանի, ապա Կովկասի հյուսիսարևելյան կողմերը՝ Ատրներսեհ թագավորի մոտ: Հովհաննես կաթողիկոսը երկար ժամանակ մնացել է Գուգարքի և Վրաստանի միջև գտնվող նահանգում՝ «խոհեմ Ատրներսեհին մոտիկ»[31], որտեղ էլ նրան է հասել Կոստանդնուպոլսի Նիկողայոս պատրիարքի ցավակցական նամակը՝ արաբների կողմից պատճառված նեղությունների համար: Ապա այնտեղից գնացել է Տարոն. «Եվ հիշելով իմ անջատման տառապանքի օրը, որ իբրև ցանց ձգվել էր իմ սրտին, իմ տկարությունը փոքր-ինչ կազդուրելով ու գոտևորելով՝ ես ելա-գնացի Տարոնի աշխարհը»[32]:*

*Տեսնելով, որ Յուսուֆը դեռևս նստում է Դվինում և ավերածություններ է գործում Հայոց աշխարհում՝ Հովհաննես կաթողիկոսը Տարոնից նամակ է գրում բյուզանդական Կոստանդին կայսերը: Վերջինիս պատվիրակ Թեոդորոս Վասլիկոսը Հովհաննես կաթողիկոսին Աշոտ Բ (Երկաթ) թագավորի հետ հրավիրում է Կ. Պոլիս, ուր մեկնում է միայն թագավորը, իսկ կաթողիկոսը գնում է Դերջան՝ խուսափելով Կ. Պոլիս մեկնելուց. «Թեպետ հրավիրակը հաճախակի ինձ սիրալիրությամբ հրավիրում էր գնալ պալատ, կայսեր մոտ, սակայն ես չէի կամենում [գնալ]՝ մտածելով, որ գուցե գտնվի մեկը և կասկածի իմ այնտեղ գնալուն և ինձ քաղկեդոնական համարի»[33]:*

*Հովհաննես կաթողիկոսը Դերջանից մեկնում է Մանյա այր. շուրջ մեկ տարի ապրում է այնտեղ, այցելում է նաև Թորդան, որտեղ գտնվում էր Գրիգոր Լուսավորչի գերեզմանը: Իր Պատմության մեջ նա երանությամբ է հիշում Սեպուհ լեռան ճգնավորների հետ անցկացրած ինն ամիսները:*

---

[30] *Նույն տեղում, էջ 219:*

[31] *Նույն տեղում, էջ 267:*

[32] *Նույն տեղում, էջ 271–273:*

[33] *Նույն տեղում, էջ 287–289:*

*Այդ միջոցին՝ 915 թ., Աշոտ Բ Երկաթը մեկնեց Կոստանդին Ծիրանածին կայսեր մոտ. վերջինս նրան ճանաչեց որպես հայոց թագավոր: Բյուզանդական զորքերի օգնությամբ Աշոտ Երկաթը ճնշեց կենտրոնախույս ուժերին, սակայն նրա հորեղբոր որդին՝ Աշոտ Շապուհյանը, որ դեռ Սմբատ Ա-ի ժամանակներից Յուսուֆի կողմնակիցն էր, Յուսուֆի կողմից 915 թ. ճանաչվեց հայոց թագավոր՝ դառնալով Աշոտ Երկաթին հակաթոռ թագավոր:*

*Հովհաննես կաթողիկոսը ստիպված վերադառնում է Այրարատ, որտեղ գահի համար Դվինում նստող Աշոտ Երկաթի դեմ պայքար սկսած Աշոտ Շապուհյանը գրավել էր Վաղարշապատը՝ շրջակա գյուղերով: Հովհաննես կաթողիկոսը փորձում է հաշտեցնել նրանց, սակայն ջանքերն ապարդյուն են անցնում: Այդ օրերի մասին նա ցավով գրում է. «Իսկ ես ողբում էի իմ խղճուկ կյանքի համար, որովհետև շատ անգամ բնակվեցի նրանց հետ, ովքեր ատում էին խաղաղ կյանքը, քանի որ ես էի խաղաղարարը և երբ խոսում էի, նրանք կռվում էին իմ դեմ»[34]:*

*Խաղաղ չեն անցել նաև Հովհաննես կաթողիկոսի կյանքի հաջորդ տարիները: Արաբ ոստիկան Նսրրի հալածանքներից խույս տալու համար վանականների հետ նախ պատսպարվել է Գեղա լեռան ծործորներում, ապա այնտեղից գնացել Սևանա կղզի: «Դարձյալ ճանապարհ ընկնելով՝ գնացինք մինչև իմ ձեռակերտ Բյուրական ամրոցիկը, որը ես գնել էի գանձով, ուր և տաշած քարերով կառուցել ու բարեկարգել էի հաստահեղույս այս եկեղեցին՝ գեղեցիկ զարդարանքով ու նորակերտ հորինվածքով և այն հաստատելով որպես կուսակրոն ճգնավորների վանք»[35]: Սակայն կաթողիկոսին Բյուրականում ևս հանգիստ չեն թողնում. Նսրրը զորքով հարձակվում է Բյուրականի վրա: Մինչ հարձակումը՝ կաթողիկոսը հեռանում է այնտեղից՝ գնալով Բագարան, ուր նրան հյուրընկալում է Աշոտ Շապուհյանը: Այստեղ մնում է ամռանից մինչև աշուն, ու, թեև Աշոտը սիրով է վերաբերվում նրան, 927 թ. Գագիկ Արծրունի թագավորի (908–943) հրավերով մեկնում է Վասպուրական՝ հուսալով, որ մի օր կրկին կվերադառնա կաթողիկոսանիստ Դվին: Սակայն Նսրրը գրավել էր Դվինը:*

*Պարզ է, որ Հովհաննես կաթողիկոսը խաղաղ ու հանգիստ կյանք չուներ, որ ժամանակ ունենար Պատմություն գրելու: 898 թ. 50 տարեկան հասակում կաթողիկոս դարձած Հովհաննեսը՝ 909 թ. մինչև 927 թ. շրջել է տեղից տեղ, քանի որ 893 թ. երկրաշարժից ավերված կաթողիկոսանիստ Դվինն անընդհատ հարձակումների էր ենթարկվում: Ուստի, դեռևս 485 թ. Գյուտ Արահեզացի կաթողիկոսի կողմից Դվին տեղափոխված կաթողիկոսանիստը 927 թ. Գագիկ Արծրունու աջակցությամբ Դվինից ստիպված տեղափոխում է 915–921 թթ. կառուցված Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի, որը 927–947 թթ. եղել է հայոց հայրապետանիստը:*

---

[34] *Նույն տեղում, էջ 301:*

[35] *Նույն տեղում, էջ 337:*

*Այս պարագայում առավել համոզիչ է Գագիկ Արծրունու՝ պատվիրատու լինելու հանգամանքը, երբ հետևում ենք նրա պատմական ընթացքին ու պատմիչի կողմից նրան տրված բնութագրին. «Բայց Գագիկ թագավորը, մաքուր խորհրդով այստեղ դրսևորելով հստակ ու զգաստ միտք, անգոն վերածում էր գոյի և իր մերձակայքում եղողներին դաստիարակում էր օգտակար բաների համար, քանի որ նա միշտ իր մտքում պատկերացնում էր չարությունից անվնասելի մնալ ու մոտիկ լինել ստացողի [արարչի] նմանությանը…»[36]: Արարչի հետ համեմատվող «իմաստուն մտքով»[37] Գագիկ թագավորի «մշտական հրավերի ու կանչի համաձայն»[38] էլ 927 թ. Գագիկ Արծրունի թագավորի մոտ հանգրվանել է արդեն ծեր կաթողիկոս-պատմիչը. «Եվ քանի որ ցարդ տևեց անդնդապտույտ ալիքների հորձանքը և չհանդարտվեց, այդ պատճառով ես ստիպված եղա գալ այստեղ և ստեղծել այս տագնապալի պատմությունը»[39]:*

*Տարաբախտ հայրապետն իր կյանքի վերջին օրերն անցկացրել է Աղթամարում. այստեղ էլ, ինչպես ինքն է գրում, ծեր տարիքում, թերևս, պատվեր է ստացել Գագիկ Արծրունի թագավորից և մինչև մահը՝ ենթադրաբար 929 թ., ավարտին հասցրել իր «Հայոց պատմություն»-ը: Սա հաստատվում է նաև այն փաստով, որ Պատմության հենց սկզբում Դրասխանակերտցին գրում է, թե «…ազդվելով մի նավապետից՝ թիավարելով արագ ընթացա իմ ճառի մակույկով և տառապելով չարչարվեցի այս պատմությունն անել»[40]: Այստեղ հեղինակը դիմում է Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանի գեղարվեստական հնարքին[41], որ նավարկում է մտքի ալիքների վրայով՝ ի դեմս նավապետի՝ ակնարկելով Պատմության պատվիրատուին[42]:*

*Ուշադրություն դարձնենք, որ հեղինակն ակնարկում է մե՛կ նավապետի, այսինքն՝ մե՛կ պատվիրատուի: Ուստի, Պատմության «ի հրամանէ թագաւորաց» տողը սկզբնապես պետք է եղած լինի «ի հրամանէ թագաւորի»: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Դրասխանակերտցու Պատմության հնագույն ձեռագիրը մեզ է հասել XVII դարից, ապա ավելի հավանական է դառնում X դարի պատմիչի՝ XVII դարում մեզ հասած ձեռագրի գրչագրական սխալմունքը:*

---

[36] *Նույն տեղում, էջ 325:*

[37] *Նույն տեղում, էջ 317:*

[38] *Նույն տեղում, էջ 359:*

[39] *Նույն տեղում, էջ 363:*

[40] *Նույն տեղում, էջ 9:*

[41] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 7:*

[42] *Ագաթանգեղոսի Պատմության պատվիրատուի մասին մանրամասն տե՛ս Վ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. Հայ հին գրականություն, Երևան, 2014, էջ 106–114:*

*Գագիկի պատվիրատու լինելու հանգամանքը կողմնակի հաստատում է նաև Անանուն Արծրունին. «Այդ պատճառով Յուսուփը սրտմտեց սաստկությամբ, հարձակվեց հայաստանցիներիս վրա, անհուն զորքով ու զենքով, և մեզ վրա հասան բազում աղետավոր անցքեր, որոնց մասին մի այլ զորավոր ու մտահարուստ հռետոր մեզնից առաջ գրեց և հանձնեց արքունի գրապահոցը»[43]: Քանի որ Անանունի Պատմության պատվիրատուն Գագիկ Արծրունին է, իսկ Յուսուփի հարձակումների մասին գրել է Հովհաննես Դրասխանակերտցին, ուստի միանգամայն բնական է պնդել՝ Անանունը, «զորավոր ու մտահարուստ հռետոր» անվանել է Հովհաննես Դրասխանակերտցուն, որի Պատմությունը տեսել է Գագիկ Արծրունու արքունի գանձարանում:*

*Ամփոփելով մեր փաստարկումները՝ գալիս ենք այն եզրակացության, որ՝*

*Ա. Հովհաննես կաթողիկոսը պատվեր չէր կարող ստացած լինել Աշոտ Ա Բագրատունուց, քանի որ վերջինս մահացել է 890 թ., երբ Հովհաննեսը դեռևս երիտասարդ էր և կաթողիկոս չէր, մինչդեռ Պատմության առաջաբանում հեղինակն իրեն ծեր մարդ է անվանում:*

*Բ. Աշոտ Բ Երկաթը, որ թագավորել է 914–928 թթ., երբ Հովհաննես Դրասխանակերտցին կաթողիկոս էր և այդ տարիներին՝ արդեն ծեր մարդ, չէր կարող լինել Հովհաննես կաթողիկոսի Պատմության պատվիրատուն, քանի որ պատմիչի կողմից արժանացել է հանդիմանության ու այպանանքի: Բացառվում է, որ Պատմության հեղինակն այպաներ իր պատվիրատուին:*

*Գ. Գուրգեն Արծրունին ևս՝ իր «անվարժ ու անփորձ մտքով», քիչ հավանական է, որ լիներ Պատմության պատվիրատուն:*

*Դ. Թեև Աշոտ Շապուհյանի մասին պատմիչը հիացմունքով է խոսում, վստահում և ապավինում է նրան. չկա որևէ փաստ, թե նա է եղել Պատմության պատվիրատուն, մանավանդ երբ նկատի ենք առնում մեր եզրակացության հաջորդ կետը:*

*Ե. Պատմության բնագրում սկզբնապես եղել է ոչ թե «ի հրամանէ թագաւորաց», այլ՝ «ի հրամանէ թագաւորի»: Դա հաստատվում է նաև «մի նավապետի», այսինքն՝ մի պատվիրատուի մասին հեղինակի վկայությամբ, ուստի Դրասխանակերտցու Պատմության պատվիրատուն մեկ թագավոր է, ոչ թե՝ երկու:*

*Զ. Հովհ. Դրասխանակերտցի կաթողիկոսը 927 թ.՝ արդեն ծեր տարիքում, Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու հրավերով կաթողիկոսարանը Դվինից տեղափոխել և հաստատվել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում, որտեղ էլ, թերևս, պատվեր է ստացել Գագիկ Արծրունի թագավորից՝ գրելու «Հայոց պատ-*

---

[43] *Թովմա Արծրունի և Անանուն. Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 441:*

*մությունը», որն էլ այնտեղ ավարտին է հասցրել մինչև իր մահը՝ ենթադրաբար 929 թ., և այն հանձնել է արքունի գանձարան:*

## ВОПРОС О ЗАКАЗЧИКЕ «ИСТОРИИ АРМЕНИИ» ОВАННЕСА ДРАСХАНАКЕРТЦИ

ВАНО ЕГИАЗАРЯН

Резюме

Католикос Ованнес Драсханакертци не мог получить заказ от двух царей, что подтверждается авторским свидетельством об ‚одном кормчемѣ, то есть об одном заказчике. Заказчиком не был Ашот I Багратуни, так как в его эпоху Ованнес был совсем юным. Ашот II Железный также не мог быть заказчиком ‚Историиѣ, потому что подвергался укорам со стороны историка. Гурген Арцруни и Ашот Шапухян также являются маловероятными кандидатурами. Католикос Ованнес Драсханакертци в 927 году, уже в преклонном возрасте, по приглашению царя Васпуракана Гагика Арцруни утвердился в церкви св. Креста на о. Ахтамар, где, возможно, получил заказ от царя Гагика Арцруни написать «Историю Армении».

## THE QUESTION ABOUT THE CLIENT OF “THE HISTORY OF ARMENIA” BY HOVHANNES DRASKHANAKERTSI

VANO YEGHIAZARYAN

Summary

Catholicos Hovhannes Draskhanakertsi couldn't have been secured an order by two kings, which is confirmed by the author about “a captain”, i.e. a client.The client wasn't Ashot A Bagratuni, as far as in his time Hovhannes was still very young. Ashot B Yerkat also couldn't have been the client of the “ The History”, for he had been reproached by the annalist. Gurgen Artsruni, as well as Ashot Shapuhyan were not likely to be clients, either. Catholicos Hovhannes Draskhanakertsi already at the advanced age, in 927, settled down in the Akhtamar St. Cross Church, just where perhaps was ordered by King Gagik Artsruni to write “The History of Armenia”.